«Վիվա Արմենիա» ՓԲԸ
Գործարար վարվելակերպի և էթիկայի կանոններ

Երևան
2026

Բովանդակություն

Վիվա -ի ղեկավարության ուղերձը

ՎԻՎԱ-Ի ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

1.1. Ի՞նչ են կանոնները և ինչո՞ւ են անհրաժեշտ 5
1.2. Ո՞ւմ վրա են տարածվում կանոնները 5
1.3. Լրացում կատարելու կարգը և հակասությունները 5

2. ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԷԹԻԿԱՆ 6

2.1. Որոշում ընդունելու սկզբունքները 6
2.2. Ղեկավարների պատասխանատվությունը 6

3. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԲԻԶՆԵՍ 7

3.1. Հարմարավետ աշխատանքային պայմաններ 7
3.2. Շահերի բախման կարգավորում և այլ գործնական պրակտիկաներ 7
3.3. Վիվա- ի և երրորդ անձանց ակտիվների պաշտպանությունը 8
3.4. Բարեխիղճ կոմերցիոն պրակտիկա 9

4. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆԸ 9

4.1. Կոռուպցիայի և կաշառակերության ցանկացած դրսևորման արգելքը 9
4.2. Տեղեկատվության հաշվառում և բացահայտում 10
4.3. Ներքին (ինսայդերական) տեղեկատվության կիրառություն 10

5. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒՄ՝ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 11

5.1. Պատասխանատվություն որոշումների համար 11
5.2. Ազդեցությունը տեղական համայնքի վրա 11
5.3. Շրջակա միջավայրի պաշտպանություն 12

6. ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 12

6.1. Զեկուցում 12
6.2. Հետապնդման արգելք 12

7. ԱՄՓՈՓՈՒՄ 13

ՎԻՎԱ- Ի ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՐՁԸ

Հարգելի գործընկերներ,

Ուրախությամբ ներկայացնում ենք Վիվա-ի Գործարար վարքագծի և էթիկայի կանոնները (այսուհետ՝ «Կանոններ»), որն արտացոլում է մեր հանձնառությունը՝ գործունեություն ծավալելու ազնվությամբ, պրոֆեսիոնալիզմով և փոխադարձ հարգանքով: Կանոնները սահմանում է էթիկական վարքագծի հիմնարար սկզբունքներն ու չափանիշները, որոնք առաջնորդում են մեր որոշումները, գործողությունները և հարաբերությունները աշխատակիցների, հաճախորդների, գործարար գործընկերների, բաժնետերերի, կարգավորող մարմինների և բոլոր մյուս շահագրգիռ կողմերի հետ:

Վիվա-ն ընկերություն է, որի գործունեության հիմքում նորարարությունը, պատասխանատվությունը և շարունակական զարգացումն են: Տարիների ընթացքում մենք վերածվել ենք թվային էկոհամակարգի, որը միավորված է մեկ ընդհանուր փիլիսոփայությամբ՝ #Viva: Իրականացնելով մեր բիզնես նպատակները՝ մենք միաժամանակ հավատարիմ ենք մնում հաճախորդների, գործարար գործընկերների և հասարակության հետ կայուն և վստահելի հարաբերությունների ձևավորմանը՝ առաջարկելով նորարարական արտադրանքներ և ծառայություններ՝ պատասխանատու, թափանցիկ և էթիկական մոտեցմամբ:

Մեր գործարար որոշումները, առօրյա գործունեությունն ու փոխգործակցությունները հիմնված են մեր հինգ հիմնարար արժեքների վրա՝ **Նորարարություն, Պատասխանատվություն, Հարգանք, Թիմային աշխատանք և Հավատարմություն**:: Այս արժեքները սահմանում են մեր ինքնությունը, ձևավորում են մեր կորպորատիվ մշակույթը և ոգեշնչում են մեզ հասնել կայուն հաջողության՝ գործելով ազնվությամբ և բարեվարքությամբ:

Վիվա -ում էթիկան, ազնվությունն ու արդարությունը հանդիսանում են այն հիմնարար սկզբունքները, որոնք առաջնորդում են յուրաքանչյուր գործարար որոշում: Մենք համոզված ենք, որ երկարաժամկետ բիզնես հաջողությունը հնարավոր է միայն պատասխանատու գործարար գործելակերպի, կիրառելի օրենսդրության և կարգավորող պահանջների պահպանման, ինչպես նաև կորպորատիվ կառավարման և էթիկական վարքագծի բարձրագույն չափանիշներին հետևելու շնորհիվ:

Կանոնների Սույն Կանոնների պահանջների պահպանումը Վիվա-ի թիմի յուրաքանչյուր անդամի անձնական պատասխանատվությունն է: Մեզանից յուրաքանչյուրից ակնկալվում է հասկանալ և պահպանել Կանոնների պահանջները, յուրաքանչյուր գործարար որոշման ժամանակ առաջնորդվել ազնվությամբ և անհապաղ դիմել խորհրդատվության կամ բարձրաձայնել մտահոգությունները, երբ տեղեկանում է այնպիսի վարքագծի մասին, որը կարող է հակասել կիրառելի օրենսդրությանը, սույն Կանոնների և կամ Ընկերության ներքին նորմատիվ փաստաթղթերին: Ոչ մի բիզնես նպատակ կամ առևտրային հնարավորություն չի կարող արդարացնել ոչ էթիկական կամ անօրինական վարքագիծը:

Վիվա-ն որդեգրել է զրոյական հանդուրժողականության մոտեցում կոռուպցիայի, խարդախության, խտրականության, ոտնձգությունների, հետապնդման և օրենքի, Կանոնների Սույն Կանոնների կամ Ընկերության ներքին նորմատիվ փաստաթղթերի ցանկացած այլ խախտման նկատմամբ: Բարեխղճորեն ներկայացված յուրաքանչյուր հաղորդում կքննարկվի լրջորեն, արդարացիորեն և գաղտնի՝ կիրառելի օրենսդրությամբ թույլատրելի սահմաններում:

Որպես Վիվա-ի Կառավարման խորհրդի անդամներ՝ մենք պարտավորվում ենք առաջնորդել սեփական օրինակով, ձևավորել ազնվության, բացության և հաշվետվողականության մշակույթ և ապահովել, որ սույն Կանոններում ամրագրված սկզբունքները հասկանալի լինեն, հարգվեն և կիրառվեն Ընկերության բոլոր մակարդակներում: Միասին մենք ստեղծում ենք էթիկական աշխատանքային միջավայր, որն ամրապնդում է վստահությունը, պաշտպանում է մեր հեղինակությունը և նպաստում է Ընկերության կայուն հաջողությանը:

Ծնորհակալություն Վիվա-ի արժեքներին և սկզբունքներին Ձեր հավատարմության և դրանք հետևողականորեն պահպանելու հանձնառության համար:

ՎԻՎԱ- Ի ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

	Նկարագրություն
Նորարարություն	Մենք մշակում ենք առաջադեմ լուծումներ և հաջողությամբ կիրառում ենք դրանք:
Պատասխանատվություն	Մենք հոգում ենք այն ամենի մասին, ինչ անում ենք և պատասխանատվությամբ ենք վերաբերվում մեր քայլերին:
Հարգանք	Մեր բոլոր քայլերի հիմքում էթիկայի կանոններն ու մարդկային արժեքներն են:
Թիմային աշխատանք	Մենք աշխատում ենք ազնվորեն՝ կիսելով համատեղ հաջողության արդյունքները:
Հավատարմություն	Մեզ համար կարևոր են հավատն ու հավատարմությունը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1. Ի՞ՆՉ ԵՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ԻՆՉՈՒ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ

Սույն Կանոնները սահմանում է Վիվա-ի գործունեությունը կարգավորող հիմնարար սկզբունքները, վարքագծի չափանիշները և էթիկական գործարար գործունեության կանոնները: Այն աշխատակիցներին, ղեկավարներին և կառավարման մարմինների անդամներին տրամադրում է ուղեցույց՝ գործունեությունն ազնվությամբ, պրոֆեսիոնալիզմով և փոխադարձ հարգանքով իրականացնելու համար՝ միաժամանակ ապահովելով կիրառելի օրենսդրության, Կանոնների Սույն Կանոնների և Ընկերության ներքին նորմատիվ փաստաթղթերի պահանջների պահպանումը:

Սույն Կանոնները նպաստում է էթիկական որոշումների կայացմանը և օգնում է բացահայտել, կանխել ու պատշաճ կերպով արձագանքել այն իրավիճակներին, որոնք կարող են հակասել Ընկերության արժեքներին, էթիկական չափանիշներին կամ իրավական պարտավորություններին: Կանոնների Սույն Կանոնների պահանջների պահպանումը Ընկերության անունից գործող յուրաքանչյուր աշխատակցի, ղեկավարի և կառավարման մարմնի անդամի անձնական պատասխանատվությունն է:

Բոլոր աշխատակիցները, ղեկավարները և կառավարման մարմինների անդամները պարտավոր են ծանոթանալ սույն Կանոնների ն, պահպանել դրա պահանջները և մասնակցել Ընկերության Գործարար վարքագծի և էթիկայի Կանոնների վերաբերյալ վերապատրաստման ծրագրին:

Ընկերությունն իրականացնում և մշտապես ապահովում է Կանոնների Սույն Կանոնների պահանջներին նվիրված վերապատրաստման ծրագիր՝ կազմակերպելով կանոնավոր դասընթացներ առկա, հեռավար կամ այլ հասանելի ձևաչափերով, սակայն ցանկացած դեպքում՝ ոչ պակաս, քան երկու (2) տարին մեկ անգամ:

1.2. Ո՞ՒՄ ՎՐԱ ԵՆ ՏԱՐԱԾՎՈՒՄ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Կանոնների Սույն Կանոնների դրույթները կիրառվում են Viva-ի բոլոր աշխատակիցների, ղեկավարների և կառավարման մարմինների անդամների նկատմամբ՝ անկախ նրանց զբաղեցրած պաշտոնից, պարտականություններից, աշխատանքային ստաժից կամ աշխատանքի վայրից: Կանոնների Սույն Կանոնների գործողության շրջանակում գտնվող յուրաքանչյուր անձ պարտավոր է հասկանալ, պահպանել և խթանել դրանում ամրագրված սկզբունքներն ու չափանիշները:

Մենք ձգտում ենք, հնարավորության դեպքում, ապահովել, որ փոխկապակցված ընկերությունները, որոնց նկատմամբ Վիվա-ն վերահսկողություն չի իրականացնում, ինչպես նաև գործընկերներն ու մատակարարները իրենց գործունեությունն իրականացնեն սույն Կանոններով սահմանված չափանիշներին համապատասխան: Եթե դուք առնչություն եք ունենում երրորդ կողմի/անձի հետ, ապա համոզվեք, որ գործընկերը համաձայն է Կանոններում արտացոլված էթիկայի չափանիշներին:

1.3. ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վիվա-ի Կանոնները կարող են լրացվել և փոփոխվել՝ հաշվի առնելով գործող օրենսդրությունը, այդ թվում՝ առանձին նորմատիվային փաստաթղթերով՝ ցանկացած պահի, առանց նախնական ծանուցման:

Կանոնները հրապարակային փաստաթուղթ է, որին կարելի է ծանոթանալ Ընկերության www.viva.am պաշտոնական վեբ կայքում:

Եթե Կանոնների որևէ մաս հակասում է տեղական օրենքներին կամ նորմատիվային ակտերին, ապա կիրառվում են միայն Կանոնների Սույն Կանոնների այն բաժինները, որոնք չեն հակասում գործող օրենքներին և նորմատիվային ակտերին:

ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԷԹԻԿԱՆ

Միայն արդար և էթիկայի չափանիշներին համապատասխան բիզնեսը կարող է կայուն լինել: Աշխատակիցներից յուրաքանչյուրի գործողությունները կարող են անմիջականորեն ազդել Ընկերության հեղինակության և ֆինանսական վիճակի վրա, և հետևաբար, յուրաքանչյուր աշխատակցի պատասխանատու և գիտակցված էթիկական վարքագիծը երաշխավորում է ողջ Ընկերության հաջողությունն ու բիզնեսի կայունությունը:

2.1 ՈՐՈՇՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Կանոնները սահմանում են վարքագծի և որոշումների ընդունման հիմնական սկզբունքները, սակայն անհնար է կանխատեսել բոլոր հավանական իրավիճակները:

Եթե չգիտեք՝ ինչպես վարվել, տվեք ձեզ հետևյալ հարցերը.

- Արդյո՞ք դա օրինական է:
- Արդյո՞ք դա ազնիվ և արդարացի է:
- Արդյոք դա համապատասխանու՞մ է Ընկերության շահերին:
- Արդյոք դա համապատասխանու՞մ է Ընկերության կանոններին:
- Արդյոք ես ունե՞մ լիազորություններ դրա համար:
- Որքանո՞վ լավ կզգամ ինձ, եթե իմ գործողությունների մասին տեղեկությունը հայտնվի ԶԼՄ-ներում:

Եթե այս հարցերից որևէ մեկի պատասխանը «Ոչ» է, անհրաժեշտ է զերծ մնալ այդ գործողությունից:

Եթե Կանոններում ընդգրկված թեմաների վերաբերյալ հարցեր ունեք, կասկածում եք՝ արդյոք իրավիճակը կանոնակարգվում է Կանոններով կամ հանդիսանում է Կանոնների խախտում, ապա պետք է քննարկեք այն ձեր անմիջական կամ ավելի բարձր մակարդակի ղեկավարի հետ կամ հարցը ուղարկեք համապատասխանության գործառույթն իրականացնող ստորաբաժանում (compliance@viva.am):

2.2 ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Ընկերության ղեկավարներն, անկախ նրանց զբաղեցրած պաշտոնից ունեն լրացուցիչ պատասխանատվություն՝ ստեղծելու և պահպանելու այնպիսի աշխատանքային միջավայր, որտեղ թիմի անդամները գիտեն և հասկանում են իրենց պարտականությունները, հոգեբանորեն ապահով են զգում և կարող են ազատորեն արտահայտել իրենց մտահոգությունները, ստանալ արձագանք, և որոնց մտահոգությունների համար ձեռնարկվում են համապատասխան միջոցներ:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԲԻԶՆԵՍ

3.1 ՀԱՐՄԱՐՎԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Վիվա-ն հանձնառու է ապահովելու անվտանգ, առողջ և փոխադարձ հարգանքի վրա հիմնված աշխատանքային միջավայր։

Ընկերությունը հանձնառու է հարգել մարդու իրավունքները, խթանել արդյունավետ և ներառական աշխատանքային միջավայրի ձևավորումը, ինչպես նաև ապահովել իր աշխատակիցների աշխատանքի առողջության և անվտանգության, ինչպես նաև հոգեբանական բարեկեցության պահպանումը։

Համաձայն Կանոնների՝ Վիվա- ի աշխատակիցները (այդ թվում ղեկավարները) պետք է անեն հնարավոր ամեն ինչ, որպեսզի ստեղծեն բարենպաստ աշխատանքային միջավայր, որտեղ յուրաքանչյուրը հնարավորություն ունի լիովին բացահայտել իր ներուժը և զերծ մնալ ցանկացած տեսակի ճնշումներից, ոտնձգությունից, կողմնակալությունից և խտրականությունից: Վիվա-ն որդեգրել է զրոյական հանդուրժողականության մոտեցում ցանկացած տեսակի ոտնձգության, խտրականության, ճնշման (բուլինգի), հետապնդման (retaliation) կամ այլ անընդունելի վարքագծի նկատմամբ՝ անկախ անձի զբաղեցրած պաշտոնից կամ Ընկերությունում ունեցած դերից։

Այս թեմայի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ներկայացված են հետևյալ նորմատիվային փաստաթղթում՝ **«Վիվա Արմենիա» ՓԲԸ խտրականության, հետապնդման և ոտնձգության վերաբերյալ քաղաքականություն:**

3.2 ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԱՅԼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐ

Ընկերությունը չի թույլատրում, որ անձնական շահերը, հարաբերությունները կամ գործունեությունը (ներառյալ հաճախորդների, մատակարարների, մրցակիցների, գործարար գործընկերների կամ Վիվա-ի այլ աշխատակիցների հետ անձնական հարաբերությունները) ազդեն կամ տպավորություն ստեղծեն, թե ազդում են աշխատակցի, ղեկավարի կամ կառավարման մարմնի անդամի կողմից Ընկերության անունից իր պարտականությունների օբյեկտիվ, անկախ և անկողմնակալ կատարման կամ որոշումների կայացման վրա։

Շահերի բախման առկայությունը ինքնին պարտադիր չէ, որ հանդիսանա խախտում, սակայն այն պետք է անհապաղ բացահայտվի և պատշաճ կերպով կառավարվի: Փաստացի, հնարավոր կամ ընկալվող շահերի բախումը չբացահայտելը կամ այն պատշաճ կերպով չկառավարելը կարող է բացասաբար անդրադառնալ տվյալ անձի, Ընկերության և նրա հեղինակության վրա։

Այն դեպքերում, երբ առկա է կամ կարող է առաջանալ շահերի բախում, կիրառվում է հետևյալ հիմնարար սկզբունքը՝ «բացահայտել և ձեռնպահ մնալ»։ Անձը պարտավոր է անհապաղ բացահայտել շահերի բախումը՝ Ընկերության ներքին ընթացակարգերին համապատասխան, և ձեռնպահ մնալ դրա հետ կապված ցանկացած քննարկման, որոշման կայացման կամ գործողության մասնակցությունից, մինչև շահերի բախումը պատշաճ կերպով գնահատվի և կարգավորվի։

Շահերի բախման բացահայտման, հայտարարագրման և կառավարման կանոնները, ներառյալ արտաքին գործարար գործունեության, լրացուցիչ աշխատանքի և ներդրումների

հետ կապված շահերի բախման դեպքերը, սահմանված են Ընկերության «Շահերի բախման կառավարում» քաղաքականությամբ:

Ընկերությունը հանձնառու է ապահովելու, որ նվերները և գործարար հյուրընկալությունը առաջարկվեն, տրամադրվեն, ընդունվեն և ստացվեն բացառապես օրինական գործարար նպատակներով և Ընկերության «Նվերների և գործարար հյուրընկալության» քաղաքականությանը համապատասխան: Նվերները և գործարար հյուրընկալությունը երբեք չպետք է օգտագործվեն գործարար որոշումների վրա ոչ պատշաճ ազդեցություն գործադրելու, բիզնես ձեռք բերելու կամ պահպանելու, որևէ ոչ իրավաչափ առավելություն ստանալու կամ պահպանելու, ինչպես նաև ոչ պատշաճ վարքագծի տպավորություն ստեղծելու նպատակով:

3.3 ՎԻՎԱ- Ի ԵՎ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր աշխատակից պարտավոր է Վիվա- -ի ակտիվները, ներառյալ՝ նյութական և մտավոր սեփականությունը, գաղտնի տեղեկությունները, անձնական տվյալները, պաշտպանել գողությունից, վնասից, սխալ օգտագործումից և ոչ պատշաճ տնօրինումից: Այդ պատասխանատվությունը վերաբերում է նաև երրորդ անձանց կողմից մեզ վստահված ակտիվներին:

- **Պետական գաղտնիքի կամ այլ գաղտնի տեղեկությունների** ցանկացած փոխանցում պետք է խստորեն համապատասխանի անվտանգության պահանջվող ընթացակարգերին:

- Վիվա- ի աշխատակիցներն ու ղեկավարները **Վիվա- ի գաղտնի տեղեկություններն** օգտագործում են միայն բիզնես նպատակներով և միշտ պետք է պահեն և տնօրինեն այդ տեղեկությունները՝ **տեղեկատվության անվտանգության ռեժիմի** պահանջներին համապատասխան:

- Աշխատանքային պարտականությունների կատարման համար Վիվա -ն կարող է աշխատակիցներին տրամադրել հասանելիություն հաճախորդների, աշխատակիցների, գործարար գործընկերների, կոնտրագենտների և այլ ֆիզիկական անձանց **անձնական տվյալներին**: Նման հասանելիությունը սահմանափակվում է բացառապես այն տեղեկատվությամբ, որն անհրաժեշտ է աշխատակցի ծառայողական պարտականությունների կատարման համար, և կարող է օգտագործվել միայն օրինական գործարար նպատակներով: Անձնական տվյալներին հետաքրքրությունից դրդված կամ որևէ այլ չարտոնված նպատակով հասանելիություն ստանալը կամ դրանց մշակումը խստիվ արգելվում է: Այդ տվյալները պահանջում են առանձնահատուկ զգույշ և պատասխանատու վերաբերմունք, ինչպես նաև Ընկերության **անձնական տվյալների մշակման և պաշտպանության վերաբերյալ քաղաքականությունների** պահանջների խիստ պահպանում:

- **Մտավոր սեփականությունը** Վիվա -ի ամենաարժեքավոր ակտիվներից մեկն է: Մենք պաշտպանում ենք մեր մտավոր սեփականության օբյեկտները և հարգում ենք շուկայի մյուս մասնակիցների մտավոր սեփականության իրավունքները: Միշտ հիշեք, որ նման տեղեկատվության ոչ պատշաճ օգտագործումը կամ բացահայտումը, նույնիսկ Վիվա-ի ներսում, կարող է լրջորեն վնասել Ընկերության հեղինակությանը, նրա հաճախորդներին, գործարար գործընկերներին և մասնագիտական համայնքին, հանգեցնել Ընկերության իրավական պատասխանատվության և բացասաբար ազդել նրա գործունեության վրա: Անհապաղ հաղորդեք ցանկացած փաստացի կամ կասկածելի միջադեպի, այդ թվում՝ տեղեկատվական անվտանգության կամ անձնական տվյալների պաշտպանության

խախտման, ինչպես նաև Վիվա-ի ակտիվների ոչ պատշաճ օգտագործման ցանկացած դեպքի մասին՝ խախտումների հաղորդման համար սահմանված հաղորդակցման ուղիներով և Ընկերության համապատասխան «Տեղեկատվական անվտանգության» և «Անձնական տվյալների պաշտպանության» քաղաքականություններին համապատասխան:

3.4 ԲԱՐԵԽԻՂՃ ԿՈՄԵՐՑԻՈՆ ՊՐԱԿՏԻԿԱ

Վիվա-ն հաճախորդների հետ կառուցում է երկարաժամկետ հարաբերություններ՝ նրանց տրամադրելով բարձրակարգ և անվտանգ ծառայություններ ու ապրանքատեսակներ, ինչպես նաև սպասարկման հարմարավետ պայմաններ: Հաճախորդի ոչ մի հաղորդագրություն չպետք է մնա անպատասխան:

Վիվա-ն օգտագործում է ծառայությունների առաջխաղացման բարեխիղճ մեթոդներ, որոնք չեն կարող ընկալվել որպես ոչ էթիկական կամ վնաս հասցնել հաճախորդներին, գործընկերներին կամ երրորդ անձանց:

Մենք մրցակցային առավելություններ չենք ստանում անօրինական և ոչ էթիկական եղանակներով, այդ թվում՝ գաղտնի համաձայնությունների և կոռուպցիոն գործողությունների միջոցով: Վիվա- ի աշխատակիցները և ղեկավարները չեն կարող քննարկել գներ կամ որևէ պաշտոնական կամ ոչ պաշտոնական համաձայնագիր կնքել ցանկացած մրցակցի հետ գների, զեղչերի, բիզնեսի վարման պայմանների կամ շուկայի սեգմենտների և ուղիների վերաբերյալ, որտեղ Ընկերությունը մրցակցում է, եթե նման քննարկման կամ համաձայնագրի նպատակը կամ արդյունքը հակասում է կիրառելի նորմերին:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆԸ

Վիվա- ի աշխատակիցները և ղեկավարները պետք է հետևեն կիրառելի նորմերի, Ընկերության նորմատիվային փաստաթղթերի սահմանած պահանջներին՝ անկախ իրենց գործունեության իրականացման վայրից:

4.1 ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԵՎ ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԱՑԱԾ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՐԳԵԼՔԸ

Աշխատակիցներին, ղեկավարներին, կառավարման մարմինների անդամներին, ինչպես նաև Ընկերության անունից կամ ի շահ Ընկերության գործող ցանկացած անձի արգելվում է՝ ուղղակիորեն, անուղղակիորեն կամ միջնորդների միջոցով, առաջարկել, խոստանալ, տրամադրել, թույլատրել, պահանջել կամ ընդունել որևէ դրամական կամ այլ առավելություն՝ որևէ որոշման վրա ոչ պատշաճ ազդեցություն գործադրելու, բիզնես ձեռք բերելու կամ պահպանելու, ինչպես նաև որևէ այլ ոչ իրավաչափ գործարար կամ այլ առավելություն ստանալու նպատակով:

Ընկերությունը չի թույլատրում դյուրացնող վճարումներ (facilitation payments) և չի կատարում քաղաքական նվիրատվություններ, այդ թվում՝ քաղաքական կուսակցություններին, քաղաքական շարժումներին կամ պետական պաշտոնի թեկնածուներին, բացառությամբ այն դեպքերի, երբ դա ուղղակիորեն թույլատրված է կիրառելի օրենսդրությամբ և հաստատվել է Ընկերության ներքին նորմատիվ փաստաթղթերին համապատասխան:

Կոռուպցիոն ռիսկեր պարունակող ցանկացած գործունեություն կամ գործարք (ներառյալ նվերները և գործարար հյուրընկալությունը, փոխգործակցությունը Հանրային պաշտոնատար

անձանց և Հանրային կազմակերպությունների հետ, հովանավորությունները, բարեգործական նվիրատվությունները և այլ համանման գործունեությունը) պետք է իրականացվի Ընկերության «Հակակոռուպցիոն» քաղաքականությանը համապատասխան և ենթակա լինի Ընկերության ներքին համապատասխանության (Compliance) վերահսկողությանը:

4.2 ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ և ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Թափանցիկ հաշվառում

Մենք ցանկանում ենք, որ մեր հաճախորդները, աշխատակիցները, գործընկերները, բաժնետերերը և ներդրողները ունենան բավարար տեղեկատվություն մեր գործունեության վերաբերյալ: Մենք ձգտում ենք բաց և ակտիվ լինել մեր հաղորդակցության շրջանակում: Տեղեկատվության բացահայտման դեպքում մենք առաջնորդվում ենք տեղեկատվության թափանցիկության և Ընկերության առևտրային շահերի ապահովման միջև ողջամիտ հավասարակշռության պահպանման սկզբունքներով:

Տեղեկատվության բացահայտում

Վիվա-ն ձգտում է, որ հաշվապահական գրանցամատյանները, հաշվետվությունները, հաշիվները և ֆինանսական հաշվետվությունները վարվեն պատշաճ մանրամասնությամբ, ճիշտ ներկայացնեն Ընկերության գործողությունները՝ կիրառելի նորմերին և ներքին վերահսկողության համակարգին համապատասխան:

Յուրաքանչյուրս պետք է հիշի, որ ճշգրիտ հաշվետվությունը կարևոր է ոչ միայն այն պատճառով, որ այն պահանջվում է կարգավորող մարմնի կողմից, այլ նաև այն պատճառով, որ այդ տվյալներն օգնում են պահպանել Ընկերության մրցունակությունը շուկայում: Ուստի, մեր կողմից տրամադրված գործարար տեղեկատվությունը միշտ պետք է լինի ճշգրիտ, ժամանակին, ամբողջական, արդար և հասկանալի: Վիվա- ում արգելվում է փաստաթղթերի կեղծումը, ցանկացած գործողությունների իրական բնույթի խեղաթյուրումը:

Մենք ապահովում ենք մեր գործունեության թափանցիկությունը՝ տարբեր շահագրգիռ կողմերի հետ բաց փոխգործակցության միջոցով և պարբերաբար հրապարակելով ամբողջական, հավաստի, պատշաճ, ժամանակին և հասկանալի տեղեկատվություն:

Հանրային հաղորդակցություն

Վիվա- -ի ապրանքանիշն ու հեղինակությունը մեր ամենաթանկ ակտիվներից են, և շուկայում Ընկերության դիրքը մեծապես կախված է դրանց պաշտպանությունից և առաջխաղացումից:

Վիվա- -ի՝ տեղեկատվական համայնքի հետ փոխգործակցության վերաբերյալ ԶԼՄ-ների տեղեկատվության տրամադրման մեր նորմատիվ փաստաթուղթը սահմանում է Ընկերությունը հրապարակայնորեն ներկայացնելու համար լիազորված անձանց շրջանակը:

Աշխատակիցները պետք է հիշեն, որ սոցիալական լրատվամիջոցներում կամ այլ հանրային ռեսուրսներում իրենց սուբյեկտիվ կարծիքի ցանկացած արտահայտություն հասարակության կողմից մեկնաբանվում է՝ որպես Ընկերության պաշտոնական դիրքորոշում: Այս առումով, Վիվա-ն զգուշացնում է չմասնակցել այնպիսի թեմաների շուրջ քննարկումներին, որոնց մեկնաբանումը հանրային դաշտում արգելված է և/ կամ կարող է վնասել Ընկերության հեղինակությանը և կապիտալացմանը:

4.3 ՆԵՐՔԻՆ (ԻՆՍԱՅԴԵՐԱԿԱՆ) ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի ընթացքում յուրաքանչյուր աշխատակից կարող է կարևոր տեղեկություններ իմանալ Վիվա- ի կամ այլ կազմակերպությունների մասին՝ նախքան այդ տեղեկատվության հրապարակային դառնալը: Նման ներքին տեղեկատվության օգտագործումը աշխատակցի կամ երրորդ անձանց համար անձնական օգուտներ ստանալու նպատակով խախտում է օրենսդրության պահանջը և անընդունելի է Վիվա- ի կողմից:

Օրինակ՝ Ընկերության ֆինանսական արդյունքների վերաբերյալ տեղեկությունները, նախքան հրապարակային դառնալը, ներքին տեղեկատվություն են համարվում, և դրանց օգտագործումը՝ որպես անձնական խորհուրդ փոխկապակցված անձին, ևս խախտում է հանդիսանում:

Վիվա-ի աշխատակիցներ չեն կարող գործարքներ կատարել այլ ընկերությունների հետ, անկախ նրանից՝ նրանք ունեն ներքին տեղեկատվություն, թե՝ ոչ, կամ խորհուրդ տալ երրորդ անձանց կատարել այդպիսի գործարքներ կամ փոխանցել նյութական ոչ հրապարակային տեղեկատվություն այլ անձանց՝ առանց Ընկերության կողմից հստակ թույլտվության:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒՄ՝ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

Անհնար է պատկերացնել ժամանակակից հասարակության կյանքն առանց հեռահաղորդակցության ապրանքատեսակների և թվային տեխնոլոգիաների: Այս առումով, Վիվա-ն ստանձնում է հատուկ պատասխանատվություն՝ հաշվի առնելով, որ յուրաքանչյուր տարածաշրջանում, որտեղ Ընկերությունը ներկա է, այն իր գործունեությամբ կարող է ազդել տվյալ տարածաշրջանի տնտեսական, սոցիալական և էկոլոգիական զարգացման վրա:

Ընկերության պատասխանատու վարքագիծը ավելի մանրամասն ներկայացնում ենք Վիվա - ի **կայուն զարգացման վերաբերյալ հաշվետվություններում:**

Ընկերության պատասխանատու գործունեության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է **Վիվա-ի կայուն զարգացման տարեկան հաշվետվություններում**:

5.1 ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մենք ընդունում ենք, որ նորարարությունները, որոնք մենք օգտագործում ենք բիզնեսի արդյունավետությունը և հաճախորդների բավարարվածությունը բարձրացնելու համար, էական գործոններ են, որոնք Ընկերությանը նոր գործարար հնարավորություններ ընձեռնելու հետ մեկտեղ ստեղծում են ռիսկեր վերջինիս համար: Ուստի, Վիվա-ն փորձում է հավատարիմ մնալ կայուն զարգացման սկզբունքներին. վարում է իր բիզնեսը էթիկայի նորմերին համապատասխան, պատասխանատվություն է ստանձնում ընդունվող որոշումների և իր գործունեության հետևանքների, ինչպես նաև դրանց՝ հասարակության վրա ազդեցության համար:

5.2 ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎՐԱ

Մենք ձգտում ենք նպաստել տեղական համայնքների և տարածքների տնտեսական զարգացմանն ու սոցիալական բարեկեցությանը յուրաքանչյուր տարածաշրջանում, որտեղ Ընկերությունն իրականացնում է իր գործունեությունը՝ համագործակցելով տեղական շահագրգիռ կողմերի և կազմակերպությունների հետ:

Վիվա- ն նաև խրախուսում է աշխատակիցներին ժամանակ և ռեսուրսներ ներդնել համայնքներին աջակցելու, բարեգործություններ կատարելու, ինչպես նաև զարգացման հնարավորություններ ընձեռելու նպատակով:

5.3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընկերությունը հանձնառու է նվազեցնել իր գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունը՝ բնական ռեսուրսների պատասխանատու օգտագործման, բնապահպանական արդյունավետության շարունակական բարելավման և շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատու գործարար գործելակերպի խթանման միջոցով:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վիվա-ն, բոլոր մակարդակների աշխատակիցների հետ ձևավորելով բաց և վստահելի երկխոսություն, ապահովում է այնպիսի մշակույթ, որը հնարավորություն է տալիս հաղորդել մտահոգությունների մասին:

6.1 ՁԵԿՈՒՅՈՒՄ

Եթե Կանոնների, Ընկերության նորմատիվային ակտերի կամ օրենսդրության դրույթների հնարավոր խախտման վերաբերյալ տեղեկություններ կամ կասկածներ ունեք, հայտնե՛ք մեզ:

Վիվա-ն մշակել և վարում է հատուկ ընթացակարգեր այն աշխատակիցների և երրորդ անձանց համար, ովքեր ցանկանում են հայտնել խախտումների մասին: Կարող եք ընտրել ստորև նշվածներից Ձեզ հարմար տարբերակը.

- դիմեք անմիջական ղեկավարին կամ եթե տեղեկությունը վերաբերում է անմիջական ղեկավարի գործողություններին, ավելի բարձր մակարդակի ղեկավարին,
- դիմեք համապատասխանության գծով ղեկավարին (ցանկացած ձևով, այդ թվում՝ compliance@viva.am է. հասցեով),
- լրացրեք «Թեժ գծի» էլեկտրոնային ձևանմուշը, որը տեղադրված է Վիվա- ի պաշտոնական կայքում և կորպորատիվ հարթակում (այդ թվում՝ անանուն կերպով),
- գրեք «Թեժ գծի» էլեկտրոնային փոստի հասցեին՝ hotline@viva.am ,

Ցանկացած անձ, ով խախտել է Կանոնների պահանջները, կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության՝ ընդհուպ մինչև աշխատանքից ազատում և (կամ) պայմանագրի խզում՝ այդ պայմանագրի և գործող օրենսդրության դրույթներին համապատասխան:

6.2 ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԱՐԳԵԼՔ

Վիվա-ն ապահովում է բոլոր հաղորդագրությունների անկախ և համապարփակ դիտարկումը և պաշտպանում է նրանց, ովքեր պատշաճ և անաչառ կերպով հայտնել են խնդիրների և մտահոգությունների մասին, աջակցել են հետազոտություններին և հրաժարվել են մասնակցել Կանոնների սկզբունքներին կամ պահանջներին հակասող գործունեության:

Եթե կարծում եք, որ խնդրի կամ խախտման մասին ծանուցելուց հետո Ձեր դեմ պատասխան միջոցներ են կիրառվել, դիմեք համապատասխանության գործառույթ իրականացնող ստորաբաժանում (compliance@viva.am):

ԱՄՓՈՓՈՒՄ

Վիվա-ն հանձնառու է իր գործունեությունն իրականացնել էթիկական, պատասխանատու և թափանցիկ կերպով:

Թեև սույն Կանոնները սահմանում է Ընկերության գործունեության ընթացքում ակնկալվող վարքագծի հիմնարար սկզբունքներն ու չափանիշները, այն չի կարող կարգավորել գործարար գործունեության ընթացքում հնարավոր բոլոր իրավիճակները կամ էթիկական երկընտրանքները:

Հետևաբար, յուրաքանչյուր աշխատակցից, ղեկավարից և կառավարման մարմնի անդամից ակնկալվում է ցուցաբերել ողջամիտ դատողություն, գործել ազնվությամբ, կրել անձնական պատասխանատվություն իր կայացրած որոշումների համար և դիմել խորհրդատվության, եթե վստահ չէ, թե տվյալ իրավիճակում որն է ճիշտ գործողությունը:

Ընկերությունն ակնկալում է, որ Կանոնների Սույն Կանոնների պահանջները կպահպանվեն ոչ միայն դրա տառին, այլև ոգուն համապատասխան՝ ինչպես Կանոնների Սույն Կանոնների գործողության շրջանակում գտնվող անձանց, այնպես էլ Ընկերության գործարար գործընկերների և կոնտրագենտների կողմից՝ իրենց բոլոր գործարար գործունեության և փոխհարաբերությունների ընթացքում: